Արշակ Չոպանյան

Ցայգերգ

Գիշերն ահա իր բարեկամ
Կհոսե ստվերն աշխարհի վրա.
Եկուր նստինք սա ծառին տակ,
Հոս չկա ձայն, հոս մա՛րդ չկա:

Սեփ-սև է մեր շուրջն ամեն բան,
Չունի երկինքն աստղ ու լուսին.
Խաղաղությունն ահա անհուն.
Լուռ է թռչունն ու լուռ քամին:

Մոռնա՛նք, ամե՛ն բան հոս մոռնանք,
Մոռնա՛նք երեկն, այսօր ու վաղն,
Մոռնա՛նք ցավերն, անձկություններն
Եվ կյանքի տենդն ու մահվան պաղն:

Ճակատդ ի վար, իմ սիրելի՛ս,
Ձգե թափե՛ մազերդ առա՛տ,
Ու մի՛ խոսիր. գիշերին պես
Եղի՛ր լռին ու մռայլապատ:

Ես քու ոտքիդ տակ ծնրադրած,
Գլուխս ծոցիդ, աչքերըս փակ,
Մունջ ու անշարժ պիտ՝ ունկնդրեմ

Սրտիդ տրոփին նվազն անուշակ: